


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«21» նոյեմբեր 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ  Մ. Անանյան

ՍՅ-ԳԲԽ-53/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.02.2016թ. թիվ 1/73-1/3709-16, 21.04.2016թ. թիվ 1/73-3/12646-16 և 11.07.2016թ. թիվ 1/73-1/18023-16 գրություններով ներկայացված «Պրես Ստենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Նախագահի աշխատակազմի 15.01.2016թ. թիվ ԳԿ-3 գրության հիման վրա, 04.02.2016թ. թիվ 1/73-1/3709-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Պրես Ստենդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 15.04.2016թ. թիվ 01/04.1/1510-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 04.02.2016թ. թիվ 1/73-1/3709-16 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ, քանի որ Օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (28.11.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Պրես Ստենդ» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Միաժամանակ նույն գրությամբ Կենտրոնը խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ

մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.04.2016թ. թիվ 1/73-3/12646-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 124-րդ կետի 2-րդ ենթակետը, անհրաժեշտ է նախաձեռնել «Պրես Ստենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի Ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի 01.07.2016թ. թիվ 4/126 գրության հիման վրա, 11.07.2016թ. թիվ 1/73-1/18023-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «Պրես Ստենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 12.07.2016թ. թիվ 02/61-40683 հ գրության հիման վրա, 14.07.2016թ. թիվ 1/73-3/18442-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ընթացակարգերին «Պրես Ստենդ» ՍՊԸ-ն 03.12.2015թ., 09.02.2016թ. և 10.03.2016թ. ներկայացրել է մասնակցության հայտեր (կից ներկայացվել են Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված Armeps համակարգի միջոցով հայտերի ներբեռնման ամսաթվի վերաբերյալ տեղեկատվություն պարունակող համացանցային կայքի արտատպումները):

2. «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 09.02.2016թ. թիվ 01/04.1/351-16 և 14.07.2016թ. թիվ 01/04.1/2715-16 գրություններով դիմել է «Պրես Ստենդ» ՍՊԸ-ին:

Ի պատասխան Կենտրոնի 09.02.2016թ. թիվ 01/04.1/351-15 գրությանը՝ Ընկերությունը 21.03.2016թ. թիվ 102-16 գրությամբ հայտնել է, որ «Պրես Ստենդ» ՍՊԸ-ն

հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պարբերական տպագիր մամուլի բաժանորդագրություն իրականացնող խոշոր ընկերություններից մեկը՝ 2008թ. ի վեր համագործակցելով ՀՀ մի շարք նախարարությունների, գերատեսչությունների, գրեթե բոլոր տեղական ինքնակառավարման մարմինների և խոշոր մասնավոր ընկերությունների հետ:

Նշված գրությամբ «Պրես Ստենդ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ Ընկերությունը հանդիսանում է ՀՀ տարածքում ամենախոշոր մամուլի տարածողը իր սեփական ցանցի՝ կրպակների միջոցով: Ընկերությունը իր գործունեության իրականացման ողջ ընթացքում իր կողմից ստանձնած պարտավորությունները կատարել է բացառապես բարեխիղճ և բարձր որակով՝ այդ թվում հաշվի առնելով քաղաքացիների իրազեկված լինելու՝ Ընկերության կողմից ստանձնած հանրային պարտավորության հանգամանքը: Ընկերությունը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում պետական և հարկային մարմինների հետ փոխհարաբերությունները, հանդիսանալով պարբերական տպագիր մամուլի տարածման դաշտում գերիշխող դիրք զբաղեցնող և գտնվելով ՀՀ խոշոր հարկ վճարողների ցանկում, երբևիցե թույլ չի տվել որևէ պետական կամ հարկային պարտավորությունների խախտումներ:

Ինչ վերաբերում է Կենտրոնի համապատասխան գրությանը՝ Ընկերությունը հայտնել է, որ 2014թ. հաշվեկշռային պարտավորությունների բացարձակ արժեքի գերազանցումը հաշվեկշռային ակտիվների արժեքի նկատմամբ կապված է ընկերության վարկային պարտավորությունների հետ, որոնք էլ, ըստ էության, ունեն մարման ժամանակացույց: Ընկերության կողմից ստանձնած վարկային պարտավորություններն ունեն հինգ տարվա մարման ժամկետ և ըստ ֆինանսական հաշվառման ստանդարտների՝ դասվում են կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների, որոնք էլ իրենց հերթին ունեն հստակ մարման ժամկետներ: Հետևաբար, «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի կողմից 28.11.2015թ. գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրած ֆինանսական միջոցների մասին հայտարարության մեջ Ընկերությունն արձանագրել է ակտիվների արժեքի առավելություն ընթացիկ և կարճաժամկետ պարտավորությունների արժեքի նկատմամբ, քանի որ 2014թ. պարտադիր մարման ենթակա բոլոր պարտավորությունները, այդ թվում՝ վարկային, ընկերության կողմից կատարվել էին ամբողջությամբ:

Այսպիսով, Ընկերության կարծիքն հետևյալն է. ընթացիկ տարվա պարտավորությունները ներառում են կարճաժամկետ պարտավորություններ, իսկ երկարաժամկետ պարտավորությունները չեն կարող դիտվել որպես ընթացիկ տարվա ընթացիկ պարտավորություն, քանի որ դրանց մարման պարտավորությունը առաջանում է հաջորդ տարիներին վարկային կազմակերպության հետ համաձայնեցված ժամկետներում՝ ըստ մարման ժամանակացույցի:

«Պրես Ստենդ» ՍՊԸ, պատշաճ ծանուցված լինելով 28.07.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՅ-ԳԲԽ-53/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ Նախագահի աշխատակազմի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ Նախագահի աշխատակազմը (այսուհետ նաև՝ Պատվիրատու 1) 15.01.2016թ. թիվ ԳԿ-3 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Նախագահի աշխատակազմի կարիքների համար թերթերի և ամսագրերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-15/20-15/71» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) հրավերի պահանջների համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացվել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպս նաև հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության՝ «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցում է ակտիվների հաշվեկշռային արժեքին, ինչի հետևանքով՝ Ընկերության հայտ մերժվել է:

Պատվիրատու 1-ը, պատշաճ ծանուցված լինելով 28.07.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՅ-ԳԲԽ-53/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու 2) 01.07.2016թ. թիվ 4/126 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատու 2-ի կարիքների համար գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի, Կարգի 84-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին համապատասխան կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/20-ՀԱԳ-16/06» ծածկագրով լրատվամիջոցների ձեռքբերման ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2) շրջանակներում հայտ է ներկայացրել «Պրես Ստենդ» ՍՊԸ-ն:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված, տվյալների ճշտման մասին 29.06.2016թ. հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Պատվիրատու 2-ը, պատշաճ ծանուցված լինելով 28.07.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-53/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. ՍՑ-ԳԲԽ-53/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 04.02.2016թ. թիվ 1/73-1/3709-16, 21.04.2016թ. թիվ 1/73-3/12646-16, 11.07.2016թ. թիվ 1/73-1/18023-16 գրություններով ներկայացված «Պրես Ստենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից կազմակերպված «ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-15/20-15/71» ծածկագրով ընթացակարգ.

- ՀՀ Նախագահի աշխատակազմի կարիքների համար կազմակերպված «ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-15/20-15/71» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Պրես Ստենդ» ՍՊԸ-ն 28.11.2015թ. հայտ է ներկայացրել:

- «Պրես Ստենդ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով, հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:**

- Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 01.12.2015թ. կայացած նիստի թիվ 7/12 արձանագրության 2.3-րդ կետով որոշել է Ընթացակարգի 16-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 26-րդ, 28-րդ և 29-րդ չափաբաժինների մասով «Պրես Ստենդ» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

- Պատվիրատու 1-ը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 01.12.2015թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

- Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատու 1-ին 04.12.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերության հայտը ներկայացնելու նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքները կազմել են համապատասխանաբար՝ **2.520.049.019 և 2.398.268.989** ՀՀ դրամ:

- Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 15.01.2016թ. կայացած նիստի թիվ 71/3 արձանագրության 1.2-րդ կետով որոշել է Ընկերության հայտը մերժել:

- Կենտրոնը 15.04.2016թ. թիվ 01/04.1/1510-16 գրությամբ արձանագրել է «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը և խնդրել ՀՀ ֆինանսների նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին

մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

- ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.04.2016թ. թիվ 1/73-3/12646-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը, անհրաժեշտ է նախաձեռնել «Պրես Ստենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

- ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 12.07.2016թ. թիվ 02/61-40683h գրության հիման վրա, 14.07.2016թ. թիվ 1/73-3/18442-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ընթացակարգերին «Պրես Ստենդ» ՍՊԸ-ն 03.12.2015թ., 09.02.2016թ. և 10.03.2016թ. ներկայացրել է մասնակցության հայտեր (կից ներկայացվել են Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված Armeps համակարգի միջոցով հայտերի ներբեռնման ամսաթվի վերաբերյալ տեղեկատվություն պարունակող համացանցային կայքի արտատպումները):

2. «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/20-ՀԱԳ-16/06» ծածկագրով ընթացակարգ.

- «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/20-ՀԱԳ-16/06» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Պրես Ստենդ» ՍՊԸ-ն 24.06.2016թ. հայտ է ներկայացրել:

- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել

է, որ **հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

• Ընկերությունը հայտի N 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով, հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:**

• Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը 24.06.2016թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ Ընթացակարգ 2-ի 83-րդ, 95-րդ, 144-րդ և 148-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

• Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 28.06.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

• Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին 29.06.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի **ժամկետանց հարկային պարտավորություն՝ 20 786 759 ՀՀ դրամի չափով**, իսկ Ընկերության հայտը ներկայացնելու նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքները կազմել են համապատասխանաբար՝ **2 304 357 069 և 2 139 099 414 ՀՀ դրամ:**

• Ընթացակարգ 2-ի գնահատող հանձնաժողովը 01.07.2016թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետով որոշել է «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

3. ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 12.07.2016թ. թիվ 02/61-40683 հ գրության հիման վրա, 14.07.2016թ. թիվ 1/73-3/18442-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ընթացակարգերին «Պրես Ստենդ» ՍՊԸ-ն 03.12.2015թ., 09.02.2016թ.,

և 10.03.2016թ. ներկայացրել է մասնակցության հայտեր (կից ներկայացվել են Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված Armeps համակարգի միջոցով հայտերի ներբեռնման ամսաթվի վերաբերյալ տեղեկատվություն պարունակող համացանցային կայքի արտատպումները):

6. ՍՑ-ԳԲԽ-53/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ Նախագահի աշխատակազմի 15.01.2016թ. թիվ ԳԿ-3, «Հայաստանի Ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի 01.07.2016թ. թիվ 4/126, Երևանի քաղաքապետարանի 12.07.2016թ. թիվ 02/61-40683 հ գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

1. ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից կազմակերպված «ՀՀՆԱ-ՇՀԱՊՁԲ-15/20-15/71» ծածկագրով ընթացակարգ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից **հայտը ներկայացվելուն նախորդող՝**

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«Պրես Ստենդ» ՍՊԸ-ն **28.11.2015թ.** մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից կազմակերպված «ՀՀՆԱ-ՇՀԱՊԶԲ-15/20-15/71» ծածկագրով ընթացակարգին:

Ընկերությունը հայտի N 3.4 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.12.2015թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելու նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքները կազմել են համապատասխանաբար՝ **2.520.049.019 և 2.398.268.989 ՀՀ դրամ**:

Հիմք ընդունելով վերհիշյալ հանգամանքը՝ Ընթացակարգ 1-ի գնահատող հանձնաժողովը 15.01.2016թ. կայացած նիստի թիվ 71/3 արձանագրության 1.2-րդ կետով որոշել է Ընկերության հայտը մերժել:

Կենտրոնը 15.04.2016թ. թիվ 01/04.1/1510-16 գրությամբ արձանագրել է «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը, քանի որ Ընկերությունը նշված ընթացակարգի մասնակցության հայտի N 3.4 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը, մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելու նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվեկշռային արժեքին:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով որ գործում առկա չէր որևէ տեղեկատվություն «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ **28.11.2015թ.-ից, հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ**, Կենտրոնը գտել է, որ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

2. «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/20-ՀԱԳ-16/06» ծածկագրով ընթացակարգ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից **հայտը ներկայացվելուն նախորդող՝**

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Ընկերությունը 24.06.2016թ. հայտ է ներկայացրել «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/20-ՀԱԳ-16/06» ծածկագրով ընթացակարգին:

Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր

տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

Ընկերությունը հայտի N 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով, հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:**

Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 28.06.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.06.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի **ժամկետանց հարկային պարտավորություն՝ 20 786 759 ՀՀ դրամի չափով,** իսկ Ընկերության հայտը ներկայացնելու նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքները կազմել են համապատասխանաբար՝ **2 304 357 069 և 2 139 099 414 ՀՀ դրամ:**

Այսպիսով՝ Կենտրոնը արձանագրում է, որ Ընկերության կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊԶԲ-15/20-ՀԱԳ-16/06» ծածկագրով ընթացակարգի մասնակցության հայտի թիվ N 2 և N 3.4 հավելվածներով ներկայացված հայտարարությունները հանդիսանում են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում, քանի որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ և վերջինիս հայտը ներկայացնելու նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքին:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,

- խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և **Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ**, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 12.07.2016թ. թիվ 02/61-40683 հ գրության հիման վրա, 14.07.2016թ. թիվ 1/73-3/18442-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ընթացակարգերին «Պրես Ստենդ» ՍՊԸ-ն **03.12.2015թ., 09.02.2016թ. և 10.03.2016թ.** ներկայացրել է մասնակցության հայտեր՝ կից ներկայացնելով Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված Armeps համակարգի միջոցով հայտերի ներբեռնման ամսաթվի վերաբերյալ տեղեկատվություն պարունակող համացանցային կայքի արտատպումները:

Կենտրոնը արձանագրում է, որ «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը **28.11.2015թ.** մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից կազմակերպված «ՀՀՆԱ-ՇՀԱՊԶԲ-15/20-15/71» ծածկագրով ընթացակարգին, որի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում, որից հետո

03.12.2015թ. կրկին հայտ է ներկայացրել Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված ընթացակարգին:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ **6 ամիս ժամկետով**, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, **եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների**, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի **գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները** կամ տեխնիկական բնութագրերը **որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող**:


Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, Կենտրոնը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 04.02.2016թ. թիվ 1/73-1/3709-16, 21.04.2016թ. թիվ 1/73-3/12646-16 և 11.07.2016թ. թիվ 1/73-1/18023-16 գրություններով ներկայացված «Պրես Ստենդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 20786759) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝




Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-53/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Ծատուրյան